

ՆՈՐԱՅՐ ԲԻԻԶԱՆԴԱՑՈՒ «ԲԱՌԱԳԻՐՔ ՍՏՈՐԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ» (Ի ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԺԱ.-ԺԷ. ԴԱՐՈՒՑ) ՊԱՐՍԿԵՐԷՆ, ԱՐԱԲԵՐԷՆ ԵՒ ԹՈՒՐԳԵՐԷՆ ՓՈՒՆԱՌԵԱԼ ԲԱՌԱՊԱԾԱՐԻ ԾՈՒՐՁ

Սոհամմադ Մալք Սոհամմադի  
(ԻՒՀ Սպահանի համալսարանի հայոց լեզուի եւ գրականության ամբիոն)

Մեծանուն Հայագետ Ն. Ն. Բիւզանդացու (1845-1915) արժէքաւոր աշխատութիւնը՝ «Բառգիրք ստորին Հայերէնի ի մատենագրութեանց ժԱ.-ժԷ. դարուց» ձեռագիրը պահուած է Շուեդիայի Գեթեբորգ քաղաքի Համալսարանի կենտրոնական գրադարանի ձեռագրերի բաժնում<sup>1</sup>: Ձեռագիրը բաղկացած է հինգ հատորից: Ըստ հեղինակի նշումների՝ 4-րդ հատորը աւարտել է 1885 թ. նոյեմբերի 23-ին, իսկ 5-րդ հատորը, որն ընդգրկել է պէտք բառից մինչեւ Ֆ տառը, անմշակ վիճակում է գտնուում:

2000 թ. Մարտիրոս Մինասեանի ջանքերով հրատարակուած է միջին Հայերէնի բառապաշարին նուիրուած սոյն արժէքաւոր բառարանը, որն ընդգրկում է ժԱ.-ժԷ. դարերի մատենագրութեան մէջ վկայուած Հայերէն կամ Հայերէնացած բառերը: Բառարանն ընդգրկում է ձեռագրի վերոյիշեալ 5 հատորը: 5-րդ հատորը եւս Մ. Մինասեանի մշակմամբ յաւելուած է բառարանին: Բառարանն ունի «անուր մատենագրաց եւ մատենագրութեանց յիշատակելոց ի բառարանիս» ցանկը, որտեղ աստղանիշով առանձնացուել է մինչեւ հեղինակի ապրած ժամանակաշրջանը տպագրուած գրականութիւնը: Բառարանն ունի եւս մի յաւելուած՝ «Ցուցակ մատենագրութեանց եւ թարգմանութեանց ժԲ.-ժԷ. դարուց», որը

<sup>1</sup> Göteborgs Stadsbibliotek, № 1, 2, 3, 4. տե՛ս Նորայր Բիւզանդացու դիւանի ցանկի «Բազմավէպ», 1983, 1-4, էջ 221-222, թիւ 673-676

յայտնաբերել է Մ. Մինասեանը հեղինակի անտիպներում:

Ինչ վերաբերում է այս բառարանում օգտագործուած միջնադարեան Հայկական հարուստ մատենագրութեանը, ապա Մ. Մինասեանը տալիս է հետեւեալ դնահատականը. «Ի տարբերութիւն Միջին հայերէնի բառարան արժէքաւոր աշխատութեան (Երեւան, 1987) զոյգ հեղինակների, որոնք մատենագրանում չեն օգտուել Նորայրի այս անտիպ գործի մանրամասնութիւնից...»<sup>2</sup>:

Ն. Բիւզանդացու այս արժէքաւոր բառարանի վերջում (էջ 753-767) նշուած են այն բոլոր մատենագիրների եւ մատենանների անունները, որոնք յիշատակուել եւ օգտագործուել են բառարանում, իսկ յետագայում այս մատենագիրական ցուցակը խմբագրի կողմից յայտնաբերուել եւ յաւելուածի ձեւով լրացուել է առանձին ցուցակով: Վերջինս ընդգրկում է ժԲ.-ժԷ. դարերի մատենագրական եւ թարգմանական գրականութեան ցանկը: Այս ամէնը

<sup>2</sup> Նորայր Ն. Բիւզանդացու, Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ժԱ.-ժԷ. դարուց, ԺճԵՆ 2000, էջ 3:

Ռ. Ս. Ղազարեան, Զ. Մ. Աւետիսեան, Միջին հայերէնի բառարան, հտ. I, II, Երեւան, 1978, 1992: Այս բառարանի մասին տե՛ս հետեւեալ գրախօսութիւնները՝

- Ե. Լ. Վարդանեան, Ռ. Ս. Ղազարեան, Զ. Մ. Աւետիսեան, Միջին հայերէնի բառարան, հտ. Ա, Եր., 1987, «Պատմաբանասիրական հանդէս», 1988, թիւ 3, էջ 206-214:

- Ն. Մկրտչեան, Ռ. Ս. Ղազարեան, Զ. Մ. Աւետիսեան, Միջին հայերէնի բառարան, հտ. Բ, Եր., 1992, «Պատմա-բանասիրական հանդէս»:

վկայում է հարուստ գրականութեան մասին, որն իր ձեռքի տակ է ունեցել Նորայր Բիւզանդացին՝ հարստացնելով բառարանի բառապաշարը:

Պէտք է նկատել, որ մինչ այսօր Հայերէնագիրական ուսումնասիրութիւնների համեմատաբար գերակշռող մասը նուիրուած է հին եւ նոր Հայերէնին<sup>3</sup>, իսկ միջին Հայերէնի եւ յատկապէս յարակից լեզուներից կատարուած փոխառութիւնների հարցը պատշաճ ուսումնասիրութեան ենթարկուած չէ: Հիմնական պատճառը հաւանաբար միջին Հայերէնի շրջանին պատկանող բոլոր ձեռագրերի հրատարակուած չլինելն է եղել: Հարցը կարեւորուած է այն առումով, որ միջին դարերում Հայ-իրանական, Հայ-արաբական մշակութային, գրական, գիտական, քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւնները զարգացել են, բնականաբար, ընդլայնուել են լեզուական փոխազդեցութիւնները:

Իրանագէտ Լ. Ե. Յովհաննիսեանը, համեմատելով զրաբարի եւ միջին Հայերէնի իրանական բառաչերտերը, արտայայտում է հետեւեալ որակական գնահատականը. «Գրաբարի իրանական բառաչերտը որակապէս տարբերուած է միջին Հայերէնի (նաեւ՝ Հայ բարբառների) իրանական բառաչերտից: Վերջինս միշտ էլ գիտակցուել է օտար՝ զրկուած լինելով լեզուում արմատաւորուելու կենսունակութիւնից, չի ժանգոտել նաեւ արդի Հայերէնին, այնինչ գրաբարի իրանական փոխառութիւնների մեծ մասը, արդէն 5-րդ դ., միայն ստուգաբանօրէն գիտակցուելով որպէս իրանական, կազմում էր մեր լեզուի հիմնական բառաֆոնդի անբաժան տարրը»<sup>4</sup>: Միջին Հայե-

<sup>3</sup> Հայերէնի իրանական փոխառութիւնների մասին տե՛ս Լ. Ե. Յովհաննիսեան, Հայերէնի իրանական փոխառութիւնները, Երեւան, 1990, նոյնի, Հայ-իրանական նոր ստուգաբանութիւններ, Երեւան 2005:  
<sup>4</sup> Լ. Ե. Յովհաննիսեան, Հայերէնի իրանական փոխառութիւնները, Երեւան, 1990, էջ 5:

րէնի բազմոլորտ թարգմանական եւ հեղինակային մատենագրութիւնը գիտական կարեւորութիւն է ներկայացնում: Վերջին տասնամեակներում այդ ժամանակաշրջանի բազմաթիւ ձեռագրեր են հրատարակուել, ուստի կարեւորուած է միջին Հայերէնի փոխառութիւնների ուսումնասիրութիւնը: Մի շարք փոխառութիւններ քիչ են օգտագործուել եւ անհասկանալի են եւ տարբեր մեկնաբանութիւնների են ենթարկուել, իսկ որոշ փոխառութիւններ էլ յատուկ են միջին Հայերէնին եւ օգտագործուած են նաեւ նոր Հայերէնում:

Վաստակաշատ Հր. Աճառեանի ջանքերով կազմուել է արժէքաւոր «Հայերէն արմատական բառարանը», որտեղ ներկայամատական բառարանում հին Հայերէնի բացուած են հիմնականում հին Հայերէնի բառապաշարի ստուգաբանութիւնները: Արմատական բառարանի նախաբանում Հր. Աճառեանը, հայոց լեզուի մատենագրութիւնը բաժանելով հինգ շրջանի (սկիզբաբան շրջան, յետսկիզբաբան կամ միջին Հայերէնի շրջան, ստորին կամ միջին Հայերէնի շրջան, գաւառական Հայերէն, նոր կամ աշխարհաբար Հայերէնի շրջան), նշում է, որ խարհաբար Հայերէնի շրջանը, նշում է, որ յիշեալ հինգ շրջաններից առաջին երկուսի բառերն են միայն հաւաքուած «Հայերէն արմատական բառարանում» եւ յստակեցարմատական բառարանում է, որ ստորին Հայերէնի բառարանում է, որ ստորին Հայերէնի հաբնաւ չկայ, իսկ գաւառական Հայերէնի համար հրատարակուած են Սահակ վրդ. Ամամար հրատարակուած են Սահակ վրդ. Ամատուենու «Հայոց բառ ու բանը» (Վաղարշատուենու «Հայոց բառ ու բանը» (Վաղարշատուենու «Հայոց բառ ու բանը» (Թիֆլիս, 1913)<sup>5</sup>:

Սակայն առ այսօր միջին Հայերէնի հարուստ բառապաշարի ստուգաբանական

<sup>5</sup> Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. Ա, Երեւան, 1971, էջ 7, նոյնի, Հայերէն գաւառական բառարան, Էմիսեան Ազգագրական ժողովածոյ, հրատարակութեամբ Լազական ճեմարանի Արեւելեան լեզուաց, հտ. Թ, Թիֆլիս, 1913:

եւ վերլուծական ուսումնասիրութիւնների ամբողջական աշխատանքը մնում է անաւարտ: Սոյն յօդուածաշարով փորձում ենք ներկայացնել միջին Հայերէնի փոխառեալ բառապաշարի ամբողջական ցանկը:

Մեր խնդրոյ առարկայ ուսումնասիրութեան արդիւնքը ցոյց է տալիս, որ ժ.Ա.-ժ.Ե. դարերի ընթացքում լայնածաւալ Հայիրանական եւ Հայ-արաբական գիտական, մշակութային եւ գրական առնչութիւնները Հիւսիսային եւ Հանդիսացել բազմաթիւ իրանական եւ արաբական փոխառութիւնների համար: Ն. Բիւզանդացու բառարանում միջին Հայերէնի իրանական եւ արաբական փոխառութիւններն աւելի մեծ թիւ պիտի կազմէին: Սակայն, ըստ երեւոյթին, Ն. Բիւզանդացին բառարանում աւելի շատ հիւսիսային է ընդունել արձանագրելու բուն Հայերէնի բառապաշարը:

Միջին Հայերէնի բառապաշարին նուիրուած՝ Հ. Աւետիսեանի եւ Ռ. Ս. Ղազարեանի «Միջին Հայերէնի բառարան»-ում փոխառութիւնների թիւը համեմատաբար շատ է:

Առանձնայատուկ տեղ են գրաւում փոխառեալ այն բառերը, որոնք անցել են Հայերէնին թարգմանական գրականութեան միջոցով, այսինքն՝ գրական փոխառութիւնները:

Ինչ վերաբերում է Հայերէնի իրանական, արաբական եւ թուրքական փոխառեալ բառապաշարի այն բառամիաւորներին, որոնք Հանդիպում են վերոյիշեալ երեք լեզուներում, ինչպէս նշում է Հր. Աճառեանը. «Եթէ մի բառ Հայերէնից դուրս գտնուում է նաեւ մի երրորդ լեզուի մէջ, եւ ստուգաբանում է Հէնց այդ լեզուով, ուրեմն պատկանում է այդ լեզուին<sup>6</sup>: Պէտք է նկատել, որ երբեմն «փոխառութիւնը Հայերէնն ընդունել է միջնորդաւորուած եւ

6 Հր. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, հտ. Ա., էջ 225-226:

աւելի ճիշտ՝ կրկնակի-եռակի փոխառութեամբ: Երբեմն այդպիսի փոխառութիւնների ճիշտ ուղին գտնելուն հնչիւնական անցումները չեն կարող օգնել<sup>7</sup>:

Միջին Հայերէնի արաբական փոխառութիւնների մի զգալի մասը Հայերէնին անցել է պարսկերէնի միջոցով, ինչը հաստատուում է հնչիւնական օրինաչափութիւններով: Ուշագրաւ է Հր. Աճառեանի վերլուծութիւնն այս կապակցութեամբ. «Յատկապէս ժ.Ա. դարում, երբ Հայոց Բագրատունի թագաւորութիւնն արդէն վաղուց հաստատուած էր, արաբները Հայաստանից հեռացած եւ նոյնիսկ անկման շրջանն էին մտած: Այս պատճառով ազդեցութիւնը պիտի վերագրենք ոչ թէ ուղղակի արաբերէնին, այլ մեր հարեւան պարսիկներին<sup>8</sup>: Ըստ այդմ՝ պարսկերէն եւ արաբերէն բառերը կարելի է իրարից չտարանջատել, մանաւանդ որ՝ Հիմնական մասը հաւասարապէս գործածուած է եղել եւ պարսկերէնում, եւ արաբերէնում, եւ թուրքերէնում:

Սոյն յօդուածում, հետեւելով Հր. Աճառեանի մօտեցմանը, բառայօդուածների ստուգաբանութիւնների համար նախ բերում ենք այն փոխառու լեզուն, որի միջոցով փոխառութիւնը մտել է Հայերէն, ապա ներկայացնում է բառի ծագումը եւ յիշատակում այն լեզուն, որի միջոցով փոխառութիւնը ստուգաբանուում է:

Եթէ փոխառեալ բառն առկայ է նաեւ ուրիշ լեզուներում, բերում ենք տուեալ լեզուներում փոխառուած բառերի տառադարձութիւնները:

Պէտք է նկատել, որ Հայերէնի եւ պարսկերէնի զարգացման փուլերը մի-

7 Ն. Մկրտչեան, գրայիստութիւն՝ Ռ. Ս. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան. Միջին հայերէնի բառարան. հտ. Բ, էր., 1992, - ՊԲՀ, էջ 185:

8 Հր. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, հտ. Բ, էրեւան, 1951, էջ 183:

մեանց չեն համապատասխանում<sup>9</sup>: Միջին Հայերէնի պարսկերէն փոխառութիւնները կատարուել են նոր պարսկերէնի միջոցով, որովհետեւ նոր պարսկերէնը սկսւում է 10-րդ դարից<sup>10</sup>:

Այս ուսումնասիրութեան մէջ ներկայացնում են Ն. Բիւզանդացու «Բառգիրք ստորին Հայերէնի» Ա տառից մինչեւ Խ տառի պարսկերէն, արաբերէն եւ թուրքերէն փոխառեալ բառերը, իսկ միւս յօդուածաշարում՝ փոխառեալ բառապաշարի միւս մասը: Մեր յետագայ աշխատանքներում ներկայացնում ենք նաեւ միջին Հայերէնի փոխառութիւնների թեմատիկ, քերականական դասակարգումները նաեւ փոխառութիւնների ստուգաբանական դասակարգումները, ինչը հնարաւոր է ներկայացնել մի յօդուածի շրջանակներում:

Աստղանիշով մի շարք բառերի ստուգաբանութիւնները պատկանում են տողերի հեղինակին:

1. Ադեանային, ած., «դրախտային», ասոր. *āden*, բառից է, որը Հանդիպում է նաեւ Հին Հայերէնում \*Ադէն կամ Ադին ձեւով, ա հլ. «դրախտ, եղեմ», արբ. *عدن* *ādān* բառից է: Արաբերէն բառը տարածուած է իրանական գրականութեան մէջ: Սակայն բառի այս ածականի ձեւը օգտագործուել է միջին Հայերէնում, որը հաւանաբար պարսկերէնի *behešti* («դրախտային») բառի պատճէնումն է, հետեւաբար բառի այս ածական ձեւը փոխառութիւն է միջին Հայերէնում:

2. Ազապ, ած., արբ. *'aqaq azab*, պրս. *āzāb* «ամուրի, չամուսնացած» բառից է: Արաբերէնից է փոխառեալ նաեւ թուրք.

9 Այս կապակցութեամբ մանրամասն տե՛ս Գ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն (նախագրային ժամանակաշրջան), Երեւան, 1987, էջ 490:  
10 Ժ. դարը պարսից ակաճատր բանաստեղծ Ֆիրդուսի դարն է, որի բացառիկ աշխատանքը՝ «Շահնամէն» կարեւոր դեր է ունեցել նոր պարսկերէնի կամ դարի պարսկերէնի բնագաւառում:

*azab*, քրդ. *azeb*: Բառի հնագոյն վկայութիւնը հանդիպում է Կոստանդին Ա. կաթողիկոսի կոնդակի մէջ (ժ.Գ. դար): Արբ. փոխառութիւն է միջին Հայերէնում:

3. Ազապութիւն, գ., «ազապ լինելը, ամուրիութիւն, ամուրի կեանք», տե՛ս Ազապ:

4. Ազատ, միջին պրս. *āzāt* «ազատ, ազնուական», պրս. *āzād* բառից է: Իրանական փոխառութիւն է Հին Հայերէնում:

5. Ազգ, միջին պրս. *āzg* «ծիւղ» բառից է, որ ծագում է հնիւ. *azgho* «ծիւղ» բառից, պրս. *āzay*:

6. Ազդ, «լուր» հպրս. *azdā* «լուր», միջին պրս. *azd* բառից է:

7. Աթաբէկ, ծագում է արեւել. թուրք. *atābēg* «թագաւորահայր, փոխարքայ»: Բառը չի հանդիպում «Նոր Հայկազեան բառարան»-ում: Առաջին անգամ հանդիպում է ժէ. դարում, ուստի թուրքերէն փոխառեալ բառ է միջին Հայերէնում:

8. Աթուն, գ., նաեւ *թուն*, արբ. *atūn*, *atavvun* «հացի կամ կրի փուռ, բաղնիքի հնոց»: Հմմտ. ասոր. *atūnu*, *utūnu*: Պրս. «թուն»՝ «հնոց, բաղնիք» երբ. «աթուն»՝ «թուն»՝ «հնոց, բաղնիք» է: Առաջին անգամ հանդիպում է ժ.Գ. դարում («Գիրք թղթոց», 1901 թիֆլիս, Միխայէլի Ասորոյ ժամանակագրութիւն, Երուսաղէմ. 1870 ժ.Գ. դար. թրգմ. 1246 թ.): «Աթուն» բառի երկրորդ վկայութիւնը հանդիպում է «Անկախնոն գիրք հին կտակարանաց». հրատ. Վենետիկ 1896: Արաբերէն փոխառութիւն է միջին Հայերէնում:

9. Աթունի, «բաղնիսի հնոց». ծագում է արբ. *atūn* *اتون*, *atavvun* «հացի կամ կրի փուռ, բաղնիքի հնոց»:

10. Ածեան, արժեանք, «արժէք կամ գին ունենալ», միջին պրս. *aržitan* «արժեւ», *arj* «գին, արժէք, արժանիք», պրս. *aržidan* «արժեւ» բառից է:

11. Ալ, ալի, ծագում է պրս. āl 𐭀𐭎 «սատանայ, դեւ, քաջք, ալ, առասպելական կին, ոգի, ջրային ոգի» «ախտ ինչ սատակիչ, որ պատահի կնոջ, որ նորոգ ծնեալ իցէ զմանուկ իւր. եւ այս դիպի նմա յօրէ ծննդեան մինչեւ ցօրն եօթներորդ»: Իրանական փոխ. է միջին հայերէնում:

12. Ալաժահր, ալժահրի, ծագում է արբ. al-jahrī 𐭀𐭎𐭏 «տորոն», որից նաեւ թրք. jehri, ֆրանս. alizari: Հայերէն ծ բաղաձայնը արբ. j-ի ձայնափոխութիւնն է, այլ յատուկ է այն բարբառին, որից առնուած է բառը: Արբ. փոխ. է միջին հայերէնում:

13. Ալափ, ալաֆ, գ., ծագում է արբ. alaf 𐭀𐭎𐭏 «արօտ, ճարակ, խոտ, անասունների կեր»: Բառը տարածուած է նաեւ պարսկերէնում եւ վրաց. արափի «ֆուրած»: «Իբր միջին հայ. բառ ունի միայն Նորայր. Բառ. ֆր. էջ 565» (Աճառեան): Արբ. փոխ. է միջին հայերէնում:

14. Ալիկ, ալկի, յալկէ, գ., «բուստ անասնոց, անասունի կեր». ծագում է արբ. علی علی «ալիք բառից, «տաւարի կեր»:

15. Ալուճ, ալոճ, գ., «մի տեսակ վայրի պտուղ» արեւ. թուրք. alıj, թուրք. halıj «սերկեւիլի, դամոնի, կեռասի եւ այլն, ալուճ»: Իսկ պրս. ālijā 𐭀𐭎𐭏 բառը կազմուած է պրս. ālī «սալոր» բառից եւ ča փոքրացուցիչ մասնիկից, որն այս բառի «ալուճ»-ի հետ կապ չունի: Թուրք. փոխ. է միջին հայերէնում:

16. Ախար, գ., առաջին անգամ հանդիպում է Սեբէոս 108, 150-151 (է. դար), պրս. āxur «ախոր» բառից է, որ ծագում է միջ. պրս. āxvar, āxvar i stōrān «գոմ» բառից, քրդ. axūr: Պրս. փոխ. է հին հայերէն է. դար:

17. Ախոռապան, գ., պրս. āxur «ախոր» եւ պրս. bān -պան մասնիկից է կազմուել:

18. Ակիշ, -կշի, -կշօք. գ. «կեռ, երկաթի ճանկ՝ կրակ խառնելու համար», պրս. āgiš,

նաեւ ðkūγ, ākaJ «ակիշ», որից փոխառեալ է նաեւ թուրք. āgiš, գղ. tisonnier:

19. Ամբար, -ի, գ., նաեւ ամպար, յամպար, յանպար. անուշահոտ մի նիւթ, արբ. եւ պրս. 'ambar ա'նպէր 𐭀𐭎𐭏, գղ. ambergris, իտ. ambra odorosa կամ ambra grigia. «ամպար. է նիւթ ինչ-որ, քաղցրահոտ, եւ կարծր որպէս զքար, ամպէր»: Բառը վերոյիշեալ իմաստով չի հանդիպում Հր. Աճառեանի բառարանում:

Բառը չպէտք է շփոթել Ամբար՝ «շտեմարան, ամբար, պահեստ» բառի հետ, որը ծագում է պրս. ambar «պահեստ» բառից:

Յատկանշական է, որ Ն եւ Բ բաղաձայնների հնչիւնական ազդեցութեան հետեւանքով Ն բաղաձայնը արտասանուած է Ս:

20. Ամիրլումուճի, -ճու, գ., տե՛ս Ամիրլումուճի, ծագում է արբ. amir-al mūmīnīn էմիր իւլ միւմէնին բառից, «հաւատացեալների առաջնորդ, առաջնորդ, մահմեդական հոգեւոր առաջնորդ»: Բառակապակցութեան առաջին մասը ծագում է ստոր. amīrā «կուսակալ», արբ. amīr «պետ, հրամանատար», իսկ երկրորդ մասը արբ. mūmīnīn «հաւատացեալներ» բառից:

21. Ամլախտ, -լխտի, գ., «պրս. հեմլախթ, գղ. semelle, կաշի, զոր արկանեն ի ներքոյ կօշկաց եւ մուճակաց, թուրք. էտիկէ վէ պաշմաղէտիքիլէն կէօն» (Ն. Բիւզանդացի):

22. \*Ամուտ, գ., Ն. Բիւզանդացին ստուգաբանում է հետեւեալ ձեւով. «Պրս. էյմիտ, խոփ, այսինքն՝ երկաթ յարօրի, զոր ի գաւառս ինչ սանն եւ զլծոց, որ չիֆթ սաի թուրքերէն»: «Պրս. իթմիտ. 1. խոփ, 2. լուծք, զոյգ եղանց»: Սակայն Հր. Աճառեանը գրում է. «Նման մի բառ չկայ պարսկերէնում կամ արաբերէնում, զիտէ միայն Բաջուէնի, հտ. Գ. էջ 8»:

Հաւանաբար բառը կապուած է պրս. amūd բառի հետ՝ «լուծ, սիւն, փայտ» իմաստով:

23. Ամպար, -ի, գ., տե՛ս Ամբար:

24. Անդամ, անդամն, գ., յոգ. անդամամբք, միջին պրս. andām, պրս. andām «անդամ» բառից:

25. Անդէճ, -դիճի, գ., էնտիշէ, նաեւ անտիշայ, մտամտուք, հոգ. Անդամուսն. «անդէճք անհնարինք, որ ընդ միտս անցանեն»: Հմմտ. հին հայերէն \*Անդամել, անդիճել, անտիճել «մտածել, քննել», միջին պրս. andācišn «ենթադրութիւն, մտածութիւն» andācak «կարծիք, գաղափար», պրս. andiša «խորհուրդ, մտածում, մտատանջութիւն»:

26. Անդիճելիք, գ., Ապուս. Ա, 4, տե՛ս Անդէճ:

27. Անդիճեմ, անդիճեմ տե՛ս Անդէճ:

28. Անդոն, գ., պրս. andūn էնտուճ «ցաւ, տրտմութիւն» բառից է, որը ծագում է միջին պրս. andōn «ցաւ, մտատանջութիւն»: Նաեւ՝ անդոհական, տ. անդոհութիւն: Բառը մի քանի անգամ հանդիպում է բժշկարաններում:

29. Անդոնիմ. բ. չ. «մտատանջուել ցաւել», տե՛ս Անդոն:

30. Անդոնութիւն, գ., տե՛ս Անդոն:

31. Անծրութ, գ., պրս. էնգերութ, գղ. sarcocolle. «աբարբիտն, որ է ֆարպիտն, եւ ֆր. ֆարֆիում սաէ, եւ ինքն անծրութ կու նմանի, խէժ մըն է», Բժ. գրաստ (Ն. Բիւզանդացի):

32. Անճար, ած., Անճարակ, մ., «անվրէպ, գղ. sans faute, immanquablement», պրս. nāčār նաչար, տճ. չարէսիզ, հարկաւ, ի հարկէ, ակամայ «անճար կամ անճարայ. հարկաւ, ի հարկէ»:

33. Անճարակ, ած. 1. «անհնար, ճար չկայ»: Տե՛ս Անճար: 2. Բառը նշանակում է նաեւ «մկնականջ խոտը» պրս. anjarak «մի տեսակ ուսն, մարդանդուշ»: Հանդի-

պում է զանազան բժշկարաններում: Տե՛ս Անճարակ:

34. Անճարակիմ տե՛ս Անճար:

35. Անճարակութիւն, Անճարկութիւն, գ., տե՛ս Անճար, Անճարակ:

36. Անճարանամ, Անճարեմ, տ. Անճարող, տե՛ս Անճար:

37. Անտէճ, տ. Անդէճ. Անտիճեմ, բ. ն., տե՛ս Անդիճեմ:

38. Անտիշայ, գ., տե՛ս Անդէճ:

39. Աշմ, գ., պրս. եւ արբ. yašm եէշիմ «յասպիս», գղ. jade. «ի քարէ պատուականէ, որոյ անունն է ալպէսգօն, որ է աշմ»:

40. Ապիզար, ած., ուրացեալ, նոյնեալ, անէժքէ ապիզար եմ (լինիմ) «հրածարել» ծագում է պրս. bēzār բիզար բառից ձանձրացկոտ, տաղտկացած է, bēzāri «ձանձրոյթ, անհանգստութիւն, չարչարանք»:

41. Ապիզարիմ տե՛ս Ապիզար:

42. Ապիզարիմ տե՛ս Ապիզար:

43. Ապիկեայ, ած., իրանական փոխառութիւնն է: Հմմտ. պրս. ābginā աբգինէ, «ապագի, շիշ» բառից:

44. Ապիկեգործութիւն տե՛ս Ապիկեգործութիւն, Ապիկեայ:

45. Ապիրշում, գ., ապիրշում. տե՛ս նաեւ Ապիրշում, Միխ. ասոր գնձ. /ժԳ. դար/ ծագում է պրս. abreīšum, abreīšam արբիշամ բառից, որը ծագում է միջ. պրս. \*apereīšum բառից: Հմմտ. Ապիրշումի ճիճու պրս. քերմ արբիշամ شمشیر كرم ver a soie:

46. Ապուզնայ, -ի, -ից, գ., պրս. abūzna, abūzina, pūzina, ապուզինէ, փուզինէ, «կապիկ»: Պարսկերէնից է փոխառեալ ուսներէն обезьяна оукакаնա:

47. Ապուկալամիմ, ած., «գոյնզգոյն, մի տեսակ ընտիր կերպաս», մէկ անգամ ունի Սմբ. դատ. 88 (ժԳ. դար) եւ Միխ. Դտ, Միխիթար Գօշ (ժԲ. դար):

Արբ. *abū qalamūn*, պրս. *būqalamūn* պուգալէմուն, ած. «գոյնզգոյն, ծաղկանկար, դիպակ», (*Karst*) ի պուգալէմուն բառից, որ գոյական է եւ նշանակում է գետնաուրծ: «Ջանց արեցի *bucalmon* եւ *abucalmon* բառերի ֆրանս. բառարանային երկար բացատրութիւնները» (Ն. Բիւզանդացի):

48. Ապրիշմագործ, ած., բարդութիւնը կազմուած է պրս. *abrēšam* «դիպակ» արմատից, որը ծագում է միջ. պրս. \**aprēšum*, պրս. *abrēšum* *abrēšam* «մետաքս»:

49. Ապրիշմեղէն, ած., տե՛ս Ապրիշում:

50. Ապրիշում, գ., նաեւ Ապրիշում. պրս. *abrēšam* «դիպակ» բառից է: Տե՛ս Ապրիշմագործ:

51. Ասուպ. գ., արբ. *šahāb*, *šihāb* «ասուպ», յոգ. *šuhub* «ասուպներ» գղ. *etoile filante*: Բառը օգտագործւում է նաեւ պարսկերէնում՝ պրս. *šahāb*:

52. Աստառ, գ., միջ. պրս. \**āstar*, պրս. *āstar* «աստառ», տճ. աստար, գղ. *envers? doublure*. «կրկնոց, երես եւ աստառ»:

53. Արապերէն, արբ. *arab* «արաբ» ած., արաբական բառից է:

54. Արապերէն, մ., տե՛ս Արապերէն:

55. Արժանիւմ, բ. չ., արժանանալ, կայ նաեւ արժանեմ, բ. ն.: Միջ. պրս. *aržan* «արժան, արժանի», որից *margaržan* «մահուան արժանի» բարդութիւնը պահպանուել է:

56. Արժեմ, միջ. պրս. *aržitan* «արժեմ», *arž* «գին, արժէք, արժանիք» բառից է, պրս. *aržidan* «արժեմ, արժանի լինել»:

57. Արժեմամ, բ. չ., Աժեմամ, տե՛ս Արժեմ:

58. Արժէք, -էից, -ժեօք., տե՛ս եւ Աժէք:

59. Արիշ, գ., արբ. *ariš* 'արիշ «իբրեւ հովանի շինուած տնակ, սարփինա», պրս. *sarpinā* սարփինա: Բառը երկու անգամ գործածուել է «Գիրք Վաստակոց»-ում:

60. Արճիճ, գ., «կապար», միջ. պրս. \**arčič*, պրս. *aržiz*, յատկապէս սպիտակ *aržiz* «անագ» եւ սեւ *aržiz* «կապար»:

61. Աւեր. ած., «աւերուած, խանգարուած» միջ. պրս. \**avēr* «աւերակ», որից յոգ. *avērān*: Հմմտ. պրս. *ābād* «շէն». հգ. *ābādān* «շէն»: Պրս. *vērān* «աւեր, աւերուած»:

62. Աւերած, -ոյ, գ., տե՛ս Աւեր:

63. Աւերեմ, յաւերեմ, տե՛ս Աւեր:

64. Աւերիմ, կր., տե՛ս Աւեր:

65. Աւերութիւն, Աւերումն, գ., տե՛ս Աւեր:

66. Ափսոնեմ, բ. ն., «1. մաղթանք, որ կարդում են օձից, կարիճից եւ այլ վնասակար սողուններից ապահով մնալու համար, 2. տալիսմա, ապշած, խելագար»: Պրս. արբ. *afsun* բառից է»:

67. Ափսոս, «վիշտ, նեղութիւն» պրս. *afsos* «ափսոս, աւաղ» բառի հին ձեւն է: Միջ. պրս. *afšōs* «ծաղր»:

68. Ափսոսամ, -ացի, բ. ն. Ասոսամ, Ափսոսեմ. տե՛ս Ափսոս:

69. Ափսոսանք, տե՛ս Ափսոս:

70. Ափսոսեմ, -եցի, բ. ն., տե՛ս Ափսոսամ:

71. Բաղ, -ու, -ուց, գ., յաճախ գրւում է Բաթ. գղ. *canard*, իսկ պրս. պաղ նշանակում է վայրի սագ, թուրք.՝ *qaraq*: «Պարսիկը զընտանին նորա կոչեն գագ եւ զվայրենին պագ»: Բաղ, գղ. *canard* պրս. Միւրղաբայի «Ջրային թռչուն, ջրաթռչուն»:

Այս բառը գտնւում է տարբեր լեզուներում. ասոր. *batta*, արբ. *batt* «բաղ», պրս. *bat*:

72. Բազար, բեզար, տե՛ս. Ապիզար՝ Ապիզար եմ: Պրս. *bēzār* «ձանձրալի, տաղտկալի»:

73. Բազկանց, գ., «բազկի ապարանջան» ծագում է պրս. *bāzū* բազու «թեւ» արմատից, միջ. պրս. *bāzūk* «թեւ»: Տե՛ս նաեւ Բազկանց:

74. Բազկիկ, գ., «թեւիկ», տե՛ս Բազկանց:

75. Բազկուրար, գ. «բազկան», տե՛ս Բազկանց:

76. Բազուկ, գ. պրս. *bāzū* բազու «թեւ» բառից է:

77. Բազպան տե՛ս Բազպանտ, Բազկանց: Միջ. պրս. \**bāzurān*, պրս. *bāzubān* պազուպէնտ «կապ բազկաց», որ կազմուել է *bāzu* «բազուկ» բառից՝ *pānā-pān-bān* - պան մասնիկով (Հիւբշ.):

78. Բազպանտ, գ. տե՛ս նաեւ Բազկանց. «բազկի ապարանջան»:

79. Բալուտ, գ., «վայրի կաղին, խոզկաղին», գղ. *gland*, արբ. եւ պրս. *ballūt* պէլլութ, տճ. փէլիտ՝ «կաղին»:

80. Բախիլ, ած., «նախանձոտ», գղ. *envieux*. պրս. արբ. *baxil* բախիլ «նախանձոտ» բառից է: Բառը չի հանդիպում Հր. Աճառեանի արմատական բառարանում:

81. Բախիլիմ, բ. ն., «նախանձել, *envier*», բախիլ, բախիլօղ եւ այլն. տե՛ս Բախիլ:

82. Բահրաւ, -ի, գ., պրս. *bahre* բա'հրա՝ «մաս, բաժին, հասոյթ, հարկ, շահ, հարկապահանջութիւն, իբրեւ տուրք տալու տասնորդ» բառից է: Բառը մէկ անգամ ունի թոյլմա վրդ. Մեծոբեցւոյ Պատմ. (ԺԵ. դար):

83. Բաղանապան, -ի, -աց, գ., տե՛ս նաեւ Բաղանապան, Բաղանապան, Բաղանապետ, պրս. *bagbān* բաղբան «այգեպան» բառից է, որը կազմուած է *bag* «այգի», եւ *bān* - պան մասնիկից:

84. Բամբակ, -ի, գ., Բամպակ, Բամբակ, միջ. պրս. *pambāk* «բամբակ», պրս. *panbe*: Փոխառութեամբ տարածուած է դէպի արեւմուտք՝ մինչեւ Եւրոպա:

85. Բաշ, գ., «ձիու եւ ուրիշ կենդանիների մազը», միջ. պրս. \**barš* բառից է, պրս. *baš*:

86. Բաշխ, գ., «կերակուր բաշխել աղքատներին» պրս. *baxš* բա'խշ «բաժին, մաս» բառից է, միջ. պրս. \**baxš* «մաս եւ բաժին հանել, նուիրել» բառից: Հմմտ. պրս. *baxšēš* «նուիրել, նուիրում» հետ:

87. \*Բաշկուլ, գ., «ինչ-որ թռչուն, յուսամ, սիրամարգ»: Հաւանաբար թուրք. *bāšyūš* բաշկուշ բառից է, որը կազմուած է *bāš* «գլուխ, մեծ», յս «թռչուն»: Բառը չի հանդիպում Հր. Աճառեանի արմատական բառարանում:

88. Բարեկենդան, բարկենդան, գ., գղ. *carnival*, որից պրս. պերգէտան (Հայկղ.). ֆերգանտան, ֆերգատան, բարկենդան: կազմուել է «բարի» եւ «կենդան», «կենդանի», «կենդանութիւն» բառերից: Հայերէնից փոխառութիւնն է պրս. *barjandān* կամ *barjāndān*, արդի պրս. *barjān* ընդհանուր «չարան ամսուայ վերջին օրը, որի յաջորդ շաբաթը սկսւում է Ռամազանի ծոմապարտը» (ճիշտ ինչպէս Հայկական Բուն հոլութիւնը) (ճիշտ ինչպէս Հայկական Բուն Բարեկենդանի յաջորդ օրը սկսւում է Մեծ Պատը): Այս բառը յատուկ է միայն իսլամական շրջանին:

89. Բարէ', բարի', շ., «գէթ, գոնէ» պրս. *bāri* «գոնէ, մէկ անգամ», որից թուրք. *barē* «գոնէ»:

90. Բեզար տե՛ս Ապիզար:

91. Բեհեշտի. ած. «դրախտային», պրս. *bihišti* կամ *bāhišti* «դրախտային» բառից է: Նորագիւտ այս բառը գտնւում է Ն. Բիւզանդացիին:

92. Բէկ, գ., «իշխան», որից Աթաբակ կամ Աթաբէկ, օսմ. *bey* պէյ. թուրք. *beg* բառից է:

93. Բուխար, գ., «գոլորշի» արբ. եւ պրս. *buxār* պուխար «շողի, գոլորշի» բառից է:

94. Բուխտան, -ի, գ., (ԺԵ. դար) արբ. եւ պրս. *buxtan* «չարափսօսութիւն կամ զրպարտութիւն», որից ասոր. *buxtan*: Հարաբարակ հայերէնի մի շարք բարբառ-

ներում դառնում է խ. օրինակ՝ մահտուն> արբ. մախտուն, մահ>մախ, հաց>խաց:

95. Բուխտանասաց, -ի, գ., «գրպար- տիչ», տե՛ս Բուխտան: Բառի այս բարդ ձևը չի հանդիպում «Հայերէն արմատա- կան բառարանում»:

96. Բունկն, գ., տե՛ս նաև Բանկն, բոնգն., պրս. bāng «ձայն, կանչում» բա- ուից է: Պարսկերէնից է փոխառեալ թուրք. bong: Հմմտ. bānge azān «ազանի ձայնը՝ կանչումը՝ իսլամի հաւատոյ հանգանակի ձայնը»:

97. Բրինձ, գ., միջ. պրս. birinj «բրինձ» պրս. brenj բառից է, որից է թուրք. փրինն:

98. Բրջան, գ.,<sup>o</sup>

99. Բրջուկ, «սիսուան, ոսպան, սիսերի կճեպ»<sup>o</sup>

100. Գազ. 1, գ., տե՛ս նաև Կաստ. պրս. gāz, gōz կեազ «ձեւիչ, մկրատ»: Հմմտ. պրս. onbor e gāz:

101. Գազ. 2, գ., պրս. gaz կէզ «կան- գուն, արշուն, չափի միաւոր», օս. արշըն, կանգուն: Պարսկաստանում մի գազը մի մետր (=1.1/4 արշին) է:

102. Գազ. 3, -ի, գ., պրս. գազ «մի տեսակ ծառ, մոշի ծառը, մոլայրի»: Հմմտ. պրս. gazangabin գազանգաբին, «մի տեսակ ծառ, հայ. գազպէն», որի քաղցր նիւթից պատրաստում են իրանական խմորեղէն գազը:

103. Գազար, գ., պրս. gazar «ստեպ- դին, գազար», որից փոխառեալ են նաև արբ. jazar, ասոր. նոր պրս. havij:

104. Գահ, գ., գզ. torticolis? Նկատի ունենալով թիկնացաւի երբեմնի ցաւը, հա- ւանաբար «գահ» բառը ծագում է պրս. gāh, gah qah, qah «երբեմն, երբեմնի» բառից: Արբ. գուլունճ է «թիկնացաւութիւն», պրս. քիուլենճ «ցաւ, խիթք»: Տե՛ս նաև Գահացաւ, խուլինջ, Կոլինջ:

105. Գահացաւ, գ., տե՛ս Գահ:

106. Գահնամակ, գ., «նախարարների պատուի աստիճանի ցուցակը», միջ. պրս. \*gāhnāmāk, պրս. \*gāhnāma «օրացոյց, օրակարգ իշխանների. թագաւորի գիրք կամ ցուցակ»: Բարդութիւնը կազմուել է պրս. gāh «պատուի աստիճան» եւ պրս. nāma «նամակ, գրութիւն, գրուածք» ար- մատներից:

107. Գահ, գ., Գաջ, պրս. gaj, kaj «գաջ» բառից:

108. Գահաճ, -ի, գ., տե՛ս Գահ:

109. Գանգալ, Կանգալ, գ., «կատակ» պրս. gangal «կատակ, խաղ, բարեկամական զուարճաբանութիւն»:

110. Գալ, գ., «ջրի փարչ» գզ. am- phore, պրս. gāv «արծաթեայ կամ ոսկի սկահի» պարսկերէն բառը ծագում է պրս. gāv «կով, եզ» բառից, ուստի հայերէնին է անցել ուշ ժամանակաշրջանում (Աճառեան, Գաւառական բառարան):

111. Գաւազան, գ., միջ. պրս. \*gāvāzan «եզ քշելու գործիք, որ մի երկար փայտ էր ծայրը խթան անցկացրած». պրս. gavāza, gavāzana, gavāz «էջ կամ եզ քշելու խթան»:

112. Գափանակ, գ., «թանձր հան- դերձ», տճ. քեփեճէք «տատատոկ, կրկնոց»:<sup>o</sup>

113. Գերեզմանաբաց, իրանական փո- խառութիւն է: Հմմտ. պրս. garizmān, garazmān, միջ. պրս. garōzmān «մազդէա- կան արքայութիւնը, երկինք»:

114. Գերեզմանաբնակութիւն տե՛ս Գե- րեզմանաբաց:

115. Գերեզմանատեղի տե՛ս Գերեզմա- նաբաց:

116. Գերեզմանատուն տե՛ս Գերեզմա- նաբաց:

117. Գերեզմանեմ տե՛ս Գերեզմանաբաց:

118. Գժուիմ, բ. չ., «խենթանալ, յիմա- րուել», պրս. gij, gēj «ապուշ» բառից է,

որը իմաստափոխութեամբ հայերէնում նշանակում է նաև «խենթ»:

119. Գիծ, ած., տե՛ս Գժուիմ:

120. Գմբէթ, գ., նաև գումբէթ. գմբէ- թանի, միջ. պրս. gumbaθ, gmbat, պրս. gumbad գմբէթ, որից փոխառեալ են նաև վրաց. գումբաթի, թուրք. kymbet. իրանական բառը ծագում է ասորերէն qubbathā ձեւից արաբերէն gōz:

121. Գոհար, միջ. պրս. gōhar, պրս. gōhar «գոհար», պարսկերէնից փոխառեալ են նաև վրաց. գոարի՝ «թանկագին քար», արբ. javahr, javahir:

122. Գուզ, գուզի, գուզով, գ., «լախտ, կիւրզ, մեծ լախտ, «գոր ի հնումն ի գործ ածէին քաջամարտիկ/ք/ ի պատերազմի» միջ. պրս. \*gāvāzan «եզ քշելու գործիք, որ մի երկար փայտ էր՝ ծայրը խթան անց- կացրած». պրս. gavāza, gavāzana, gavāz «էջ կամ եզ քշելու խթան»:

123. Գուզանամ, բ. չ., տե՛ս Գուզ:

124. Գումբէթ, «կումբէթըն՝ (գում- բէթն) բարձր, երկնից նման», գանձ. Նոր Հայկզ. «Կումբէթ»: Տե՛ս Գմբէթ:

125. Գօռ, գ., տե՛ս նաև Կոռնլ. պրս. gur «շիրիմ», «հայկզ.ի Շիրիմ. պրս. կիւր «գերեզման, շիրիմ», որից կիւրիստան «գերեզմանատեղի»»: Բառը չի հանդի- պում Հր. Աճառեանի արմատական բառա- րանում:

126. Դաստ, գ., «ձեռք», պրս. dast «ձեռք» բառից է:

«Մէկ անգամ ունի Օշին սո- անաւարդ» (տե՛ս Սմբ. պտմ. հրտր. Շահն. էջ 159):

127. Դաստակ (դաստայ), գ., միջ. պրս. dastak «կոթ, բռնատեղ, տրցակ, մի բուռ լի», պրս. dasta «կոթ, բռնատեղի»:

128. Դաստապրիկ, գ., «դաշտիչոնն եւ դաստապրիկ», պրս. dasta եւ արբ. ibriq/իպրը՞ղ (յոգ. էպարիգ), «ջրկիճ, շունիճ»

ամբողջը, կը լինի «առձեռն շունիճ»: Պրս. դա՛սպէրիղ:

129. Դարապաս, գ., տե՛ս նաև դար- պաս, միջ. պրս. անձանօթ մի ձեւից, որի հետ նոյնն են պրս. darvāza «բակի մեծ դուռ, քաղաքի մեծ դուռ», դա՛րվազէ «դարպաս»:

130. Դարպաս տե՛ս Դարապաս:

131. Դարպասպան, գ., պրս. darvāzbān «դարպասապահ»: «Նոր Հայկզ. սխալ է մեկնաբանում պրս. sarayedār սարայտար»:

132. Դեւ, գ., բառն իրանական ծագում ունի եւ յանգում է հնդեւրոպական deuios- ունի եւ յանգում է հնդեւրոպական daiwa-ի միջոցով բառը՝ հին իրանական daiwa-ի միջոցով (Հմմտ. Աւեստայում՝ daeva): Հնդեւրո- պական միւս լեզուներում այս բառը հիմ- անականում նշանակում է «աստուած, աս- տուածութիւն» (յունարէն, հնդկերէն, լա- տիներէն եւլն), սակայն իրանում, զրադաշ- տիներէն եւլն), սակայն իրանում, զրադաշ- տութեան տարածման հետեւանքով, այն ստացել է բացասական երանգաւորում՝ որպէս հեթանոսական շրջանի աստուա- ծութիւնների անուանում, եւ դարձել է չար ուժերի խորհրդանիշը: Ըստ իրանական վաղ աշխարհընկալման՝ daiwa-ները եղել են կարեւոր աստուածութիւններ, ինչպէս «աս- տուած» ընդհանուր գաղափարի արտա- յայտիչը: Իսկ աշխարհի դուալիստական ընկալումն աւելի ուշ՝ զրադաշտական վարդապետութեան մէջ, իր արտացոլումը գտաւ Ահուրամազդայ (Ahura-Mazda)/ Ահ- րիման (Ahra-Mainyu) հակադրութեան սահ- մաններում, վերջինս՝ որպէս չար ուժերի տիրակալ: Դեւերը (daiwa-ները, այսպիսով, դարձան ցածր կարգի գերբնական էակ- ներ»<sup>11</sup>:

Աւեստայում «դեւ» բառը նշանակում է «կեղծ աստուածներ, աստանաների

11 Մանրամասն տե՛ս Գ. Ասատրեան, Դիւականը, «Իրան-Նամէ», 1995, թիւ 4-5, էջ 21-34:

խումբ, բազմաստուած ու անառակ ժողովուրդ»։ Աւեստայում դեւերը, որոնք մոլորեցնող են, յաճախ ջաղուների (կախարդ) եւ փերիների հետ են յիշատակուում<sup>12</sup>։

«Եղծ աղանդոց»-ում «գեւ» բառը նշանակում է «չար ոգի», ըստ Կողբացու դասակարգման՝ գեւերի տեսակները մի քանիսն են. հիմնականում՝ յուշկապարիկներ, պարիկներ, համբարուներ եւ շահապետներ<sup>13</sup>։

133. Դժոխաստես, «գեհեն, գերեզման» իրանական փոխառութիւն է. հմմտ. աւեստ. daožahva, dužaihav «գժոխք», միջին պարսկ. dōšaxw, արձանագրութիւնների մէջ dōšaxvī (կարդա՛ dōšax), պաղ. dōšax, պարսկ. dōšax: Բուն նշանակութիւնն է «վատ կայեան» եւ ծագում է աւեստ. duž`դժ, aihav (լինելը, էութիւն, գոյութիւն, կեանք) բառերից: Հայերէն ձեւը ծագում է իրանական \*dōšaxwa ձեւից:

134. Դժուար, «ծանր, ոչ դիւրին», յգ. դժուարք, ի դժուարս լինիմ, միջ. պրս. \*dušvār «դժուար», հմմտ. dušxvār, պրս. dušvār:

135. Դիպակագործութիւն, գ., «գիպակ գործելու արուեստ» միջ. պրս. dēpāk, պրս. dēbā, dēba, dēbāh «գիպակ» բառից է: Իրանականից է փոխառեալ ասոր. dēbagā «ոսկեթել հանդերձ», արբ. dībaq կամ dibāj:

136. Դմակ, գ. միջ. պրս. \*dumak հոմանիշից է, միջ. պրս. duma, dumb, dumbak, պրս. dum, dumm, dumba dumbāl:

137. Դմակեղ, գ., «գմակի իւղ», պրս. dumba եւ օսմաներէն եւաղ «իւղ» բառերից է կազմուած:

138. Դուդաք, գ., պրս. tutāk թուրքական «պապկա» բառից է: Տե՛ս նաեւ Թուրքական հմմտ. պրս. tuti թուրքի:

139. Դուլապ, գ., «համամ. գունդ աստեղացոյց»: Հմմտ. արբ. ostolāb: Փոխառութիւնը չի հանդիպում արմատական բառարանում:

140. Դուլէ՞, դուլէ՞ս, «գուղէս»՝ դուղայս, գ., պրս. տուլայ «ջրի սափոր», սուտէսթէսի, սէպոյ՛ւլի ապ: -ն. Բիւզանդացի: Փոխառութիւնը չի հանդիպում արմատական բառարանում:

141. Դուռայ, -ի, -ից, գ., «իշխանների լայն եւ հաստ հագուստ» «գուռայ եւ ուտոգէ», արբ. durrāae բառից է՝ «բրդեայ մի տեսակ հագուստ»: Այս բառի ձեւափոխումը տարբերակն է պրս. durrāja «լոգիկ» (Հիւբը): Իսկ «ուտոգէ» բառը ծագում է պրս. «ուտո» բառից:

142. \*Դուռն, գ., «մի տեսակ թռչուն» հաւանաբար պրս. durnā «կուռնիկ»<sup>14</sup>: Հանդիպում է միայն Առձեռն բառարանում, օգտագործուել է մէկ անգամ Տաթեւ. Ամառան հատոր. Պոլիս ՌՃՂ/1741:

143. Դրախտ, գ., «ծառ, պտղատու ծառ» միջին պրս. draxt «ծառ», պարսկ. diraxt «ծառ» բառից է:

144. Դրախտ, գ., «գրախտ, եղեմ» միջին պրս. draxt «ծառ», պարսկ. diraxt «ծառ»:

145. Դրամ, գ., Խոստովանադրամ, Կնքադրամ, Հաղորդադրամ, Հողադրամ, Պսակադրամ, Դրամատէր, միջ. պրս. dram, պրս. diram «մի փոքրիկ կշիռ, դրամ. 2. դրամ, փող: Հմմտ. արբ. \*dirham:

146. Դրոշ, Դրոշական, Դրոշակիր, Դրոշատրութիւն, Դրոշաքաշ: Միջ. պրս. drafš, drafša-, պրս. dirafš բառից է: Պարսկերէնից է փոխառեալ արբ. dirafs «դրոշակ», ասոր. dirafšā:

147. Դօլ, դօլոյ, գ., «դոյլ», պրս. davl դա՛վլ «դոյլ» բառից է:

12 Ա. Փորդաստոյ, Յաշտներ, Թեհրան, 1377, հտ. I, էջ 13:  
13 Մանրամասն տե՛ս Մալէք Մոհամմադի Մոհամմադ, Եզգիկ Կողբացու «Եղծ Աղանդոց» երկի լեզուն եւ ոճը, թեկնածուական ատենախօսութիւն:

148. Դօսիճայ, գ., պրս. dūsize տուշիզէ «օրիորդ, կոյս, կուսան» բառից է:

149. \*Դօստարան, գ., տե՛ս նաեւ Soq-տօքան. ն. Բիւզանդացին բառը ստուգաբանում է հետեւեալ ձեւով. «1. բաժակ, զոր յարեւ միմեանց ըմպեն. 2. գինեման: Կայ պարս. տօսթքեան. 1. սիրելի, տարփածու. 2. գինի, զոր ընդ սիրելւոյն ըմպեն: Կայ դարձեալ պրս. տօսթքեամ. 1. սիրելի, տարփաւոր. 2. բաժակ, զոր ընդ սիրելւոյն ըմպեն. 3. յաջողաբախտ...»: Ինչպէս նշուեց, բառն ունի երկու մեկնաբանութիւն. 1. բառը ծագում է պրս. դօ՛ «երկու» եւ պրս. էպթեկան՝ «բաժակ» բառերից, բարդութիւնը նշանակում է «երկու բաժակ»: Ինչպէս յայտնի է, «էսթեկան» բառը ուսուերէն փոխառութիւն է պարսկերէնում: 2. բառը կապուած է նաեւ պրս. դոսթեգան, դոստան՝ «ընկերներ» բառի հետ:

150. Եարիկ, եարուկ, գ., պրս. yār եար «մտերիմ բարեկամ, սիրեցեալ, սիրուհի» բառից է, -իկ, -ուկ մասնիկներով: Բառը հանդիպում է պարսից միաստիկ գրականութեան մէջ, յատկապէս միաստիկ բանաստեղծութեան մէջ, որտեղ յաճախ փոխաբերական իմաստով նշանակում է Աստուած:<sup>14</sup>

151. Երակ, գ., «արիւնատար անօթ, նեարդ, ջիղ» միջին պրսկ. \*rak «երակ» ձեւից, որի նորագոյն ձեւն է rag, պրսկ. rag: Իրանականից փոխառեալ է նաեւ արբ. irg «երակ»:

152. Երամ, «նոյնատեսակ թռչունների խումբ», միջին պրսկ. \*rama «հօտ, խումբ», ramak «երամակ», պաղ. rama, պրսկ. ram, rama «երամ, խումբ, հօտ»:

153. Երաշտ, ած. միջ. պրս. \*rašt «ցամաք, չոր» բառից, սակայն պրս. rašt բառը

նշանակում է «չատ չոր», փոխաբերական իմաստով նաեւ՝ «չող, ցամաք երկիր»:

154. Զամբիլ, գ., պրս. zambil, zambir «կողով զամբիւղ»: Պարսկերէնից են փոխառեալ նաեւ ասոր. zebilā, արբ. zambil, հգ. zamābil, վրաց. զամբիլի, թուրք. zembil:

155. Զանապ, գ., «վիշապ համաստեղութեան պոչը», արբ. danab կամ zamb ան զէնէպ «պոչ, ագի» բառից է:

156. Զանգ, գ., միջ. պրս. \*zang ձեւից, պրս. zang «զանգակ, բօծօծ, փոքր զանգակ»: Սրանից են փոխառեալ նաեւ ասոր. zagga «զանգակ»:

157. Զանգակատուն, գ., տե՛ս Զանգ:

158. Զըֆրքաղեմ, բ. ն., արբ. sifir «աղտ» բառից է. «Եւ զայս ազգ եւ զայլ վատ մեղրերն պարտ է եփել եւ զըֆրքաղել եւ պահել»: Փոխառութիւնը չի հանդիպում «Հայերէն արմատական բառարան»-ում:

159. Զիկ, գ., արբ. ziq «շապիկի վզի եզրերը», որը փոխառեալ է պրս. zih զիհ «օձիք» հոմանիշից. օսմ. զէհ «եզր»՝ ծնօտ՝ շրթունք:

160. Զնդանեմ, Զնտանեմ, բ. ն., միջ. պրս. zndān, zēndān, zēndan «բանտ», zēndampān «բանտապահ», պրս. zindān զեճդան «բանտ» բառից է:

161. Զանճիլ, գ., թուրք. zenjil «շղթայ», որ փոխառեալ է պրս. zenjir զէճիր, zanjir, zinjir «շղթայ» հոմանիշից:

162. Զոպայ, գ., «շօթրիների նման մի բոյս», լտ. hyssopus. 2. գոպայի տրցակ, հեղուկ մի բան սրսկելու մշտիկ», ասոր. zōpā «գոպա», որ բնիկ սեմական բառ է եւ հանդիպում է նաեւ միւս սեմական լեզուներում. ասոր. zūpu, արբ. zofa:

163. Զրեհ, գ., «զրահ», զրեհ, զրեայ, զրեհակիր. միջ. պրս. zrāh, zrā, zreh, zrād, պրս. zirih զերեհ «զրահ» բառից է:

164. Զրեհագործ, Զրեհեմ տե՛ս Զրեհ:

14 Բառը հանդիպում է Ասե Բայ Աոր գրականութեան մէջ. «Սիրեցի եարս տարան, եարայ տուիճ ու տարան, էս ինչ զուլում աշխարհ է ...» (Ա. Իսահակեան):

165. Զրեւանդ, գ., «մի տեսակ բոյս, տունկ», պրս. եւ արբ. zarāvand գէրաւէն «զրեւանդ», սրանից է փոխառեալ վրաց-գարուանդի:

166. \*Էլէճ. Էլէճ այնէմ, պրս. 'alāj (ալ'աճ) «ճար» բառից է: Էլէճ այնէմ «ճար անել, դարմանել» պրս. alāj kardan անորոշ դերբայի պատճէնումն է: 'alāj արմատը արաբերէնից է փոխառեալ պարսկերէնում, սակայն յարադիր բայի պատճէնումը հայերէնում կատարուել է պարսկերէնի միջոցով: Փոխառութիւնը չի հանդիպում «Հայերէն արմատական բառարան»-ում:

167. Էմնութիւն, գ., Ն. Բիւզանդացին բառը համարում է թուրքերէնից փոխառուած. «Թուրք. էմնիլիք. 1. ապահովութիւն, խաղաղութիւն. 2. ազատութիւն»: Սակայն բառը ծագում է արբ. amn (ամն) «1. հաստատուն, ամուր. 2. ապահով, անփոյթ, անկասկած. 3. հաւատարիմ բառից, որը գործածուում է նաեւ պարսկերէնում»: Փոխառութիւնը չի հանդիպում «Հայերէն արմատական բառարան»-ում:

168. Ընագիւն, Ընգիւն, գ., «հոռոմ, սամիթ», պրս. ընագիւնէ բառից է: Հմմտ. տճ. ըէգէնէ: Տէն Ռագիւն:

169. Ընասուլ, գ., արբ. rasul (րէսուլ) «առաքեալ, մարգարէ» բառից է: Տէն Ռասուլ:

170. \*Ընասաղ, ած. պրս. ravāk رواق «քամեալ, զտեալ, հեղուկը մրուրից պարզել» բառից է: Փոխառութիւնը չի հանդիպում «Հայերէն արմատական բառարան»-ում:

171. \*Ընասաղեմ, բ. ն., տէն Ընասաղ:

172. \*Ընասաղիմ, բ. չ., «իջանել՝ յատակին նստել, գտելէ պրս. ընաթ «պարզեալ» ընաթ «զտեալ, վճիտ իր», տէն Ընասաղ:

173. \*Ընեկան, պրս. rāyegān (րայգան) «ձրի»: «...Այն որ ընեկան տաս, մարդ չի զընէ»: Փոխառութիւնը չի հանդիպում «Հայերէն արմատական բառարան»-ում:

174. Ընգալ, գ., արբ. rezq (րըզզ), հոգ. arzāq (էրզազ), «1. ինչք, գոյք, արարք, կահ-կարասի. 2. պաշար կենաց. 3. թոշակ. 4. պարգեւ. 5. անձրեւ»: Արաբերէնից փոխառեալ է նաեւ պարսկերէնը:

175. Ընգալիմ, բ. չ., տէն Ընգալ:

176. Ընուպ, գ., արբ. rūb րիւպ «պտուղների հիւթ»: Պրս. rōb րոբ: Փոխառութիւնը չի հանդիպում «Հայերէն արմատական բառարան»-ում:

177. Թաժաի կամ թաժայ, ած., պրս. tāzeh թազէ «նոր, նորահաս, առոյգ, դարբ» բառից է, որից փոխառեալ է թուրք. taze «թարմ»:

178. Թալան, գ. արեւել. թուրք. talān «կողոպուտ, աւար, աւերում»: Տէն Թաղթան:

179. Թալանեմ, թալանեմ, բ. ն., Թալլեմ. թալլել, տէն Թալան:

180. Թախթըղ, գ., հաւանաբար արբ. թախթըղ «թուղթ գրեալ կամ գրելի» (Նոր Հայկզ.): Մէկ անգամ ունի Գնձ. յոգ.: Ծագում է արբ. taxtit طختت taxtet «գծումն, գրութիւն»:

181. Թաղար, գ., «հողէ աման», չարաթ. taṬar تاغار taqau «աման, պարկ ծածկոց»: Հմմտ. պրս. թեղար. թեղար «սափոր, կուժ»:

182. Թաղթան, «ասպատակել, աւարտութիւն», պրս. tāxtan թախթան «ասպատակել, ձիարշաւել» անորոշ դերբայից է: Փոխառութիւնը չի հանդիպում «Հայերէն արմատական բառարան»-ում:

183. Թաղթանեմ, բ. ն., Թաղթանեմ: Տէն Թաղթան: Պէտք է նկատել, որ պրս. անորոշ դերբայի մասնիկը՝ -թան-ը պահպանուել եւ խոնարհուել է հայ. -ել-ով:

184. Թաղթանեմ, բ. ն., տէն Թալանեմ, Թալանեմ, Թաղթան:

185. Թաղտ, գ., «գահ» պրս. taxt թախթ «աթոռ, գահ»: Այս բառի միջ. պրս. ձեւից փոխառեալ է հայ. «տախտ» բառը:

186. Թանգ, 1. ած., «թանգ, ծանր, նեղ, բեռնազին» պրս. tang թանգ «նեղ, անձուկ» բառից է:

187. Թանգ, 2. գ., «քաշիկ, թամբակալ, գրաստների թամբի գօտին», փոխառութիւնն ունի միայն երկու վկայութիւն. Բո. Ստեփ. Լեհ.: «Թամբակալ՝ զոր առնեն վասն ամուր ունելոյ նորա վթամբն ի վերայ ձիոյ»: Պրս. tang թենկ «թամբակալ, ձիու, գրաստի գօտի թամբ»: Սրանից է փոխառեալ արբ. tanj طنج «թամբակալ»: Պրս. բառի բուն իմաստն է «անձուկ, նեղ»:

188. Թաս, -ի, -իւ, գ., արբ. tās, tās կամ tāsā թաս «թաս, բաժակ, աման, տաշտ» բառից է, որ ծագում է պրս. tašt կամ tašt «տաշտ» բառից:

189. Թարխանայ, գ., նորագիւտ բառ, երկու անգամ գործածուել է՝ 1. Շնորհատակ. 2. Վրդն. առ.: Պրս. tarxāna (թա'րխայ»նա»), որից նաեւ թուրք. tarxana, իսկ հայ ժողովրդական լեզուում՝ թարխանայ «մի տեսակ չորթան, որով ապուր են պատրաստում, դգմած»:

190. Թարկ, արբ. tark تارك «լքումն՝ թողումն՝ մերժումն, որից տճ. թէրք էթմէք «լքել, թողնել»: Մէկ անգամ գործածուել է Վրդն. առ. 185: Օգտագործուում է հայ. արդի գաւառական լեզուներում (Ակն. Խ. Խտջ. Վն. Շիր.):

191. Թախխալիմ, բ. չ., պրս. tabxāl թա'խալ «այլազունեալ եւ ուռուցեալ ի սաստկութենէ ջերման» բառից է: Բարդութիւնը կազմուել է պրս. tab «ջերմութիւն» եւ պրս. xāl «խալ» բառերից:

Փոխառութիւնը չի հանդիպում «Հայերէն արմատական բառարան»-ում:

192. Թախուտ, -փտոյ, գ., պրս. tābūt, արբ. tābūt թաբութ «դադալ» բառից է, որոնք ծագում են արամ. tēbūtā, եբր. tēwā, tēbat «արկղ, դադալ» բառերից:

193. Թեղար, գ., «հողէ աման», պրս. taṭār (թէյղար). տէն նաեւ Թաղար:

194. Թեպղ, (թեպղի), թպղի տէն թբղ, թբպղ, «թբպղոտ կանայք» (յԱրարատ, 1909, ապրիլ, երեսք 338-339). արբ. թբպղա՞յ «գիր ալի եւ թեպղի եւ դիւական ախտից»:

Փոխառութիւնը չի հանդիպում «Հայերէն արմատական բառարան»-ում:

195. Թիր, գ., միջ. պրս. tīr, պրս. tīr «նետ» բառից է:

196. Թոնդիր, -դրի, գ., միջ. պրս. tanūr, tanūr, պրս. tanūr «թոնիր» բառից է: Պարսկերէնից է փոխառեալ արեւել. թրք. tanūr կամ tandūr, չաղաթա. tandūr: Փոխառութիւնը հաւանաբար օսմ. կամ չաղառութիւնը հաւանաբար օսմ. կամ չաղառութիւնը է անցել հայերէնին, ինչը թա. միջոցով է հնչելու առկայութիւնը: ապացուցում է Գ. Հնչելու առկայութիւնը:

Այս բառը բնորոշ է ողջ Արեւելքին, որտեղից էլ անցել է Եւրոպա: Բոլորի մայրն է սեմական արմատը՝ ասոր. tinnuru, tanūrā: Հմմտ. արբ. tannūr, յոգ. tanūr:

197. Թոպրեմ, բ. ն., «տնտեսել, հրահանգել (Նոր Հայկզ.): «պրս. թագբիր կարգան, տճ. թեսպիրէթմէք «կարգել՝ կարգաւորել»: Մէկ անգամ գործածել է Մարթին, ՆՀԲ մեկնում է «տնտեսել, հրահանգել», Աբ. «կարգաւորել». ըստ Ն. Բիւզանդացու եւ Հ. Աճառեանի բառը պէտք է ուղղել «թոպրել»: Թեսպիր «միջոց, հնար, ճար». վաստկ. 175. արբ. պրս. tedbir «հնարք, միջոց, ճար»:

198. Թոթ, գ., մէկ անգամ գործածուում է Տաթեւ. Ամ. էջ 246. նորագիւտ անստոյգ բառ: «Յայնժամ ցուցին զարիւն փղիցն, բայինքն զարիւն թթոյն, արիացան ի պատերազմ»:

199. Թոթակ, տէն նաեւ Դոթաթ, պրս. tōtak, tōti, որից արբ. tūti, tūtaq. վրաց. թրք. թոթի, արեւել. թրք. toti «պապկա»:



5. Բիզանդացի Ն. Նորայր, *Բառագիրք ստորին հայերենի ի մատենագրությանց ժԱ-ժԷ դարուց*, Ժնն, 2000:

6. Խաչատրեան Լալիկ, *Ներսէս Մկրտչեան. «Սենական լեզուները եւ հայերէնը. Եր. 2004», «Պատմաքանասիրական հանդէս», 2006, թիւ 1, էջ 328-331:*

7. Յովհաննիսեան Լ. Ծ., *Հայերէնի իրանական փոխառութիւնները*, Երեւան, 1990:

8. Յովհաննիսեան Լ. Ծ., *Հայերէնի իրանական փոխառութիւնները, բ.գ.դ. գիտական աստիճանի հայցելու ատենախօսութեան սեղմագիր*, Երեւան, 1994:

9. Յովհաննիսեան Լ. Ծ., *Հայ-իրանական նոր ստուգաբանութիւններ*, Երեւան, 2005:

10. Ղազարեան Ռ. Ս., *Միջին հայերէնի բառապաշարը*, Եր., 1993:

11. Ղազարեան Ռ. Ս., Աւետիսեան Հ. Մ., *Միջին հայերէնի բառարան*, Եր., 2009:

12. Ղազարեան Ս., *Միջին հայերէն*, գիրք Ա., Եր., 1960:

13. Մալէք Մոհամմադի Մոհամմադ, *Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի լեզուն եւ ոճը» թեկնածուական ատենախօսութիւն:*

14. Մալէք Մոհամմադի Մոհամմադ, *Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկում վկայուած փոխառեալ բառապաշարի խնդրի շուրջ*, «Բազմավէպ», 2004, էջ 206-237:

15. Մկրտչեան Ն., «Ռ. Ս. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան. Միջին հայերէնի բառարան. հտ. Բ, Եր., 1992», «Պատմաքանասիրական հանդէս»:

16. Մուրադեան Պարոյր, *Պատմութիւն պղնձէ քաղաքի» գրոյցի հայկական եւ վրացական պատումների ու նրանց փոխաչարաքերութեան շուրջ*, «Բանբեր Մատենադարանի», 1962, թիւ 6:

17. Զահուկեան Գ., *Հայոց լեզուի պատմութիւն (նախագրային ժամանակաշրջան)*, Երեւան, 1987:

18. Վարդանեան Ե. Հ., «Ռ. Ս. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան. Միջին հայերէնի բառարան, հտ. Ա, Եր., 1987», «Պատմաքանասիրական հանդէս», 1988, թիւ 3, էջ 206-214:

19. دکتر نظر ریز ( نامه لغت ، اکبر ی علی دهخدا ، یدیشه جعفر دیس دکتر و نی مع محمد ، تهران دانشگاه انتشارات ، 1373

ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆՔԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԸ Թ-Ժ ԴԱՐԵՐՈՒՄ (աղբիւրագիտական դիտարկումներ)

Ալեքսան Յակոբեան

Յօդուածի հիմքում դրուած է Կարէն Իւզբաշեանի (1927-2009) լիշատակին նուիրուած «Հայաստանի եւ Աղուանքի թագաւորութիւններն ու Բիզանդական կայսրութիւնը Ժ. դարում» հայ-ֆրանսիական գիտաժողովում (Երեւան, 20-22 սեպտեմբեր, 2010) ընթերցուած զեկուցումը

428 թ. Արշակունեաց թագաւորութիւնը վերացելուց յետոյ Սասանեանները Մեծ Հայքի հիւսիսարեւելեան Արցախ եւ Ուտիք նահանգներն ընդգրկեցին Իրանի տէրութեան մի նորաստեղծ մարզպանութեան կազմի մէջ, որն ստացել էր Առան (Աղուանք, Ալբանիա, Ռան, Ռանի) անունը. վերջինս վերցուել էր Բուն Աղուանքի (Ալբանիայի) թագաւորութեան անունից (այն ձեւաւորուել էր Բ. ա. Ա. դ. սկզբին՝ տարածուելով Կուր գետի ստորին Հոսանքից հիւսիս՝ մինչեւ Կովկասեան լեռները եւ Կասպից ծով)՝ Դրանից յետոյ՝ մինչեւ Ե. դ. վերջ, Աղուանք անունն ամբողջովին տարածուեց նաեւ Կուրի աջափնեակի Հայկական Արցախ եւ Ուտիք նահանգների վրայ՝ Արաբներն իրենց ստեղծած Արմի-

նիյա կուսակալութեան (ոստիկանութեան) մէջ պահպանեցին տուեալ վարչա-աշխարհագրական անուանակարգը (նոմենկլատուրան), եւ Արցախն ու Ուտիքը շարունարան կում էին համարուել Արմինիայի Առան (Աղուանք) հատուածի մաս<sup>3</sup>, որի տարածքի Քրիստոնեայ բնակչութեան համար շարունակուած էին գործել Աղուանից իշխանի եւ Աղուանից կաթողիկոսութեան առանձին հաստատութիւնները: Բայց իսպիւրիական թուլացման դարաշրջանում Հայոց Արեւելից կողմերում ձեւաւորուեցին հզօր աւատական իշխանութիւններ, որոնք Թ. դ. վերջին մաս կազմեցին ոչ թէ Բուն Աղուանքի (Շաքի մայրաքաղաքով), այլ՝ Մեծ Հայքի Բագրատունեաց թագաւորութեան: Դրանցից առաւել նշանաւոր դարձան իսպառիկ (Արցախ նահանգի կենտրոնում), չէնը (Արցախ նահանգի Դիզակ, Արցախի Գորոզուն (յետագայում՝ Դիզակ, Արցախի հարաւում) եւ Փառխտսը (աւելի վաղ՝ Գարգման, Արցախի եւ Ուտիքի հիւսիս-արեւմուտքում):

Իսաչէնի իշխանատոհմը, ըստ առկայ աղբիւրների համադրութեան, սերում էր վաղ միջնադարեան Մաղիւացի կոչուած իշխանութիւնից<sup>4</sup>, բայց արդէն որդեգրել էր

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Բ. Ուլուբաբեան, Հիւսիս-արեւելեան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը, - ԲԵՂ, 1975, հ<sup>տ</sup> 2, էջ 149-164; Բ. Յարութիւնեան, Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիս-արեւելեան մարզերի վարչա-քաղաքական կազմութիւնը 387-451 թթ., - ԲԵՂ, 1976, հ<sup>տ</sup> 2, էջ 77-95; Բ. Ա. Արուտյոյան, Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишиэ, - «Кавказ и Византия», вып. 1, Եր., 1979, էջ 19-35; А. А. Аюпян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Եր., 1987, էջ 109-114; И. Г. Семенов, Этнополитическая история Восточного Кавказа в III-VI вв., Автореф. дисс. ... канд. ист. наук, Махачкала, 2002, էջ 14:

<sup>2</sup> Հմմտ. А. А. Аюпян, Албания-Алуанк, էջ 142-149:

<sup>3</sup> Վերջին անգամ մանրամասն տե՛ս Ա. Եղիազարեան, Արարական խալիֆայութեան Արմինիա վարչական շրջանը (պատմա-աշխարհագրական ուսումնասիրութիւն), Եր., 2010, էջ 31-33, 36-37, 134-135:

<sup>4</sup> Տե՛ս Բ. Ուլուբաբեան, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, - ԲԵՂ, 1971, հ<sup>տ</sup> 1, էջ 182-186: